ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՐԵՐԸ ԵՒ ՀԱՅ ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Վենետիկի Մխիթարեան միաբանութեան 300ամեակին ձօնուած այս հանդիսութեան առիթով բերելով մեր մասնակցութիւնը գիտաժողովին, իւրաքանչիւրս մեր ասպարէզում մեր գեկոյցների փունջով, վստահ եմ ապրում ենք երախտիքի զգացումներ Մխիթարեան միաբանութեան հիմնադրի լուսաշող նկարագրի շուրջ, որի դարաւոր ու փառապանծ գործը շարունակում է ապրել ու համախմբել իր շուրջը ոչ միայն ներկայիս հայազգի գաւակներին, այլ նաեւ օտարներին։ Շարունակելով Մխիթար հօր նուիրական գործը, Ս. Ղազարում ապրող ու արարող վանահայրերը պահում են նրա բոցավառ կանթեղը՝ իրենց ազդաշէն առաքելութիւններով։

Մենք էլ փորձենք մեր հերթին, մեր քայլերով, գրչով եւ խօսքով հետեւել իրենց բոցավառ կանթեղին, պայծառ պահելով մեծն Մխիթար Սեբաստացու յիշատակի լոյսը։ Ձկայ մի ասպարէզ, որին չնուիրուէին Մխիթարեան հայրերը։ Նրանք մեծադիր հատորներով ներկայացրել են ոչ միայն հայ ժողովրդին վերաբերող հարցերը, այլ նաեւ համաշխարհային ոլորտներ։ Մխիթարեանները առաջիններն էին, որ անդրադարձան հայ դրամագիտութեանը։ Նրանք եղան այն անձերը, որ կորստից փրկեցին եւ հաւաքեցին տարբեր դարաշրջաններից մնացած մետաղէ հին դրամները։ Հաւաքել պատմական արժէքի այդ նշխարները, քննել նրանց վրայ դրոշմած տարալեզու արձանագրութիւնները, խորամուխ լինել նրանց կշռային չափերի մէջ, բացայայտել դրանց վրայ դրոշմած դիցական ու արքայական պատկերների նշանակութիւնը, ծառայեցնել դրանք հին ու միջնադարեան Հայաստանի պատմական կապերի լուսաբանմանը։ Սա էապէս տքնաջան աշխատանքի բնագաւառ է, որին նուիրուեցին Վենետիկի Ս. Ղազարի վանահայրերը՝ քաջ գիտակցելով դրամագիտութեան կարեւորութիւնը ու որպէս փաստացի վկայութիւններ դրամա-

գիտական նիւթը օգտագործեցին հայ ժողովրդի պատմութեանը վերաբերող հարցերի լուսաբանման ու բացայայտման գործում։ Մինչ անդրադառնալը հարուստ դրամագիտական նիւթի թողարկումների դասակարգմանը, կը ցանկանայի երախտագիտութեամբ յիշել այն բոլոր վանահայրերին, ովքեր թէկուզ նուազագոյն չափով առնչուել են վանքի դրամագիտական հաւաքածոյի հետ։

Եթէ ԺԸ. դարի սկզբներին հայկական դրամները իրենց թուային քանակով դեռեւս աննշան խումբ էին կազմում, ապա 1850 թուականից սկսած հայկական դրամների շուրջ առաջանում է մեծ հետաքրքրութիւն, սկսւում է մի մեծ շրջան հայկական դրամների հաւաքագրման գործում, որն իր դրսեւորումը գտաւ թէ՛ անհատ հաւաքորդների կողմից, թէ՛ ժամանակի գործող թանգարանների կողմից։

Վենետիկի Ս. Ղազար վանքի դրամագիտական հաւաքածոյի ստեղծման եւ պահպանման գործում երախտապարտ ենք Ալիշան եղբայրներին՝ Սերովբէ եւ Հայր Ղեւոնդ Ալիշանին, անգնահատելի է նրանց նպաստը այս գործում։ Վանքի հաւաքածուն, որ մինչ այժմ կոչւում է «Ալիշանեան հաւաքածոյ», հայ դրամագիտութեամբ հետաքրքրուողների համար անգնահատելի գանձարան է ու գանձատուն։

Հայոց իրականութեան մէջ Ս. Ղազարը դարձաւ հայկական դրամների հաւաքագրման եւ պահպանման ամենախոշոր առաջին կենտրոնը։ Հայկական դրամագիտութեան ջահը վառ են պահել իրենց մտորումներով եւ գրութիւններով Հ. Միքայէլ վրդ. Զամչեանը, Հ. Ղուկաս վրդ. Ինճիճեանը, Հ. Սիմոն Անտոնեանը, Հ. Կղեմէս Սիպիլեանը, Հ. Գրիգորիս Գալեմքեարեանը, Հ. Յակովբոս Վ. Տաշեանը Հ. Գարեգին Զարբհանալեանը, Հ. Ղեւոնդ Ալիշանը, անգնահատելի ու նշանակալից դեր ունի վերջինիս եղբայր Սերովբէ Ալիշանը՝ նրա գործունէութիւնը դրամների հաւաքագրման գործում բացառիկ է։ Ս. Ղազարի դրամագիտական հաւաքածոյի ստեղծման գործում չմոռանանք նաեւ հնագէտ, հնահաւաք Պետրոս կամ Մարգար Ալիշանին՝ Ալիշան եղբայրների հօրը, ով հին դրամների լաւ գիտակ էր եւ իր զաւակների մէջ հէնց ինքը սէր էր արթնացրել դէպի դրամագիտութիւնը։ Եթէ Վիեննայի դրամագիտական հաւաքածոյի համար պարտական ենք Հ. Կղեմէս Սիպիլեանին, ապա Վենետիկի Ս. Ղազարի դրամագիտական հաւաքածոյի ստեղծման գործում երախտապարտ ենք Սերոբէ Ալիշանին։ Դրամագէտը շուրջ վաթսուն տարի ապրելով Պոլսում շարունակեց հօր գործը եւ մինչեւ

իր կեանքի վերջին տարիները հաւաքագրեց ու ստեղծեց իր անձնական դրամների ժողովածուն, որը նուիրաբերեց վանքին։ Խօսելով իր եղբօր՝ Սերոբէի մասին, Հ. Ղ. Ալիշանը գրում է. «Կ'ուզէ բոլոր Հայկական հնութիւնները զոր հաւաքած է՝ տալ Միաբանութեանս եւ արդէն իմ անունիս փոխանցած է զանոնք. եւ ամենեւին վարձ կամ գին չ'ուզեր անոնց փոխարէն. այլ միայն որ զետեղուին առանձին դարանի մը մէջ, մակագրելով «Ալիշանեան հաւաքածոյ Հայկական Հնութիւններու». ի յիշատակ իր եւ հօրը: Կը փափաքի նաեւ միւս բոլոր հնութիւնները կամ իր դրամներու, յարգի քարերու, գրքերու հաւաքածոն, մեզի կտակել վաճառքի համար. եւ անոնց գինով հատուցանել իր պարտքը, որ ցոյց պիտի տայ մէկ առ մէկ նշանակելով»[1]։ *Շնորհիւ Սերոբէ եւ Հ. Ղ. Ալիշան եղբայրների ջանքերի, ի վերջոյ իրականացաւ նրանց երազանքը. Մխիթարեան հայրերը կարողացան տուեալ ժամանակի թանգարանային չափանիշներին համահունչ ստեղծել սեփական դրամագիտական հաւաքածոյ։ Ս. Ղազարը դարձաւ հայկական դրամների հաւաքագրման ու պահպանման ամենախոշոր առաջին կենտրոնը, որտեղ հաւաքագրուեց առատ նիւթ հայ դրամագիտութեամբ հետաքրքրուողների համար։ Մխիթարեան միաբանութեան դրամագիտական հաւաքածոն այսօր իր ունեցած նիւթերով չի զիջում Փարիզի, Վիեննայի, Միլանի, Հռոմի, Բեռլինի, Լոնդոնի յայտնի թանգարանների դրամագիտական հաւաքածոներին։*

Այն իր ստեղծման պահից մինչ օրս սրբութեամբ պահպանուել է եւ շարունակում է համալրուել։ Դրամագիտական նիւթին ծանօթանալու համար Ս. Ղազար են այցելել այնպիսի նշանաւոր դրամագէտներ ու հետազօտողներ ինչպիսիք են Ֆրանսիացի հայագէտներ Վիկտոր Լանգլուան, Էռնեստ Բաբելոնը, Մարի Բրոսսէն, Դոմենիկո Սեստինը եւ այլք, ովքեր Մխիթարեան հայրերի շնորհիւ ու օգնութեամբ կարողացել են ստեղծել իրենց աշխատութիւնները եւ յօդուածները հայկական դրամների շուրջ։ Տարի առ տարի հայ դրամագիտութեան շուրջ հետաքրքրութիւնը ընդլայնւում է ու խորանում շնորհիւ Մխիթարեան հայրերի հետեւողական դիրքորոշմանը։ «Սիսուան», «Հայապատում», «Բազմավէպ» *պարբերականներում սկսում են տպագրուել դրամագիտական յօդուածներ։ Ի. դարի առաջին կէսերին հայկական դրամների քանակութիւնը շարունակում է ընդլայնուել, որոնք նպաս-*

---

1 Խորին երախտագիտութիւնս Գերապատիւ Տ. Վահան Ծ. վրդ. Օհանեանին՝ տրամադրելու համար այս բացառիկ նիւթը:

տում են նոր ուսումնասիրութիւնների ստեղծմանը։ Ուշադրութեան արժանի է Կարապետ Բասմաջեանի «Հայկական ընդհանուր դրամագիտութիւն»[2] *խորագրով գիրքը, որը Վենետիկի Ս. Ղազարի մէջ տպագրւում է 1939 թ. ու արժանանում է Դուրեան մրցանակի։ Գիրքը առանձնապէս չի փայլում իր բարձր գիտական արժէքով, սակայն համարւում է հայ դրամագիտութեանը նուիրուած առաջին դասագիրքը։*

1935–1950 թուականները համարւում են դրամագիտական յօդուածների նուազման ակնյայտ տարիներ։ Դա կարող ենք համարել օրինաչափ երեւոյթ, քանզի հարկաւոր էր դադար, որպէսզի նոր շնչով եւ նոր ուժով երեւան գային նոր հետազօտութիւններ։

Այդպէս էլ լինում է. Վենետիկի Մխիթարեան միաբանութեան պատմութեան համար յիշատակութեան արժանի է դառնում երկու դրամագէտների այցը Ս. Ղազար։ Այս անձերը իրենց հայանպաստ ու հայաշէն գործունէութեամբ բերելու էին նոր շունչ եւ նոր խօսք հայ դրամագիտութեան ոլորտում։ Նաւակը Ս. Ղազար կղզի է բերում իրարից անկախ տարբեր տարիներին երկու պատուելի հայ դրամագէտների՝ օտար երկրներում ապրող՝ մէկին Ֆրանսիայից, միւսին Ամերիկայի Միացեալ Նահանգներից։ Նրանք կղզի էին եկել ծանօթանալու թանգարանում պահուող հին ու միջնադարեան դրամներին եւ դրանք ուսումնասիրելու։ Այդ յարգարժան հիւրերն էին՝ Պերճ Կարապետեանը[3] *եւ Զարեհ Պտուկեանը։ Իրարից անկախ ուսումնասիրելով դրամագիտական նիւթը, երկու հայ դրամագէտները բերեցին իրենց արժէքաւոր հետազօտութիւնները ոչ միայն Ս. Ղազարի թանգարանի դրամագիտական հաւաքածոյի ուսումնասիրման գործում, այլեւ համաշխարհային դրամագիտութեան ասպարէզում։ Դրամագէտների այցով բացւում են երկար տարիներ փակ մնացած պահարանները, ուր ժամանակին հին ու միջնադարեան դրամները խնամքով տեղադրուել էին այդ տուփերում հէնց իր՝ Հ. Ղ. Ալիշանի ձեռքով։ Այդ դրամների ուսումնասիրութիւնների արդիւնքում հրատարակւում են դրամագէտ Զարեհ Պտուկեանի մենագ-*

---

2 Բասմաջեան Կ., Հայկական ընդհանուր դրամագիտութիւն եւ Հայաստանի վերաբերեալ դրամներ,Վենետիկ, տպարան Ս. Ղազար 1936:

3 ՀՊԹ դրամագիտութեան բաժնում է պահւում Պ. Կարապետեանի հին եւ միջնադարեան դրամների ճոխ հաւաքածուն՝ արտաշիսեան շրջանի հազուագիւտ դրամներով:

րութիւնները եւ բազում յօդուածները[4]։ Տպագրւում են նաեւ Պերճ Կարապետեանի արժէքաւոր յօդուածները՝ նուիրուած արտաշիսեան եւ հայոց կիլիկեան դրամների շուրջ[5]։

Նշանաւոր դրամագէտների այցը Ս. Ղազար վարդապետների միջավայրում մեծ խանդավառութիւն ու ոգեշնչում բերեց դէպի դրամագիտութեան ոլորտը։ Արդիւնքում դրամագիտական յօդուածներով հետագայում հանդէս եկան նաեւ վանքի հայրերը՝ Հ. Սահակ Ճեմճեմեանը եւ Հ. Պօղոս (Համէլեան) Անանեանը, որոնք տպագրեցին դրամագիտական հարցերին առնչուող հետաքրքիր յօդուածներ[6]։ Ս. Ղազարի հաւաքածոյի համալրման ու պահպանման գործում իրենց օգնութիւնն են բերել Հ. Ներսէս Տէր Ներսէսեանը, Հ. Հմայեակ Կէտիկեանը, Հ. Եղիա Փէշիկեանը, Հ. Վահան վրդ. Յովհաննիսեանը։ Այսօր մեծ աշխատանք է կատարում Հ. Վահան վրդ. Օհանեանը, որն իր հետազօտութեամբ նոր լոյս պիտի բերի թանգարանի հաւաքածոյի ստեղծման պատմութեան ուսումնասիրութեան գործում։ Հ. Եղիա վրդ. Քիլաղպեանը իր աբբայութեան տարիներին նոյնպէս բերեց իր մասնակցութիւնը այս հարցում։

Չէր կարելի խօսել թանգարանի հաւաքածոյի մասին, չյիշատակելով այս բոլոր անձերի անունները, չարադրանքիս առաջին իսկ տողից երախտիքի ու յուզմունքի զգացումով պարուրուած։ Փորձեցի հպանցիկ ներկայացնել վարդապետների կատարած արժէքաւոր գործունէութեան մասին, ովքեր առնչուել են՝ քիչ թէ շատ, մեծ թէ փոքր գործերով, դրամների հաւաքագրման ու պահպանման գործում։ Հետեւաբար՝ անդրադառնալով վանքում պահուող դրամներին, տեսնենք թէ ինչպիսի դրամներ ունի թանգարանը իր պահոցներում։

Ս. Ղազար վանքի դրամագիտական հաւաքածոն իր տեսակով եւ որակով կազմում է մեր ազգային հարստութեան այն մէկ խոշոր մասը, որ աղբիւրագիտական առումով գնահատւում է որպէս հազուագիւտ գոհար մեր ունեցած գոհարների մէջ։ Հաւաքածոն իր ստեղծման պահից մինչեւ օրս սրբութեամբ պահ-

---

4 ՊՏՈՒԿԵԱՆ, Զ., *Կիլիկեան Հայաստանի դրամները*, Վիեննա 1963:

5 ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Պ., *Դաֆնիէի դրամագիւտ*, «Հասկ», (1949-1950), հ. II, էջ 16-21:

6 ԱՆԱՆԵԱՆ, Հ. Պ., *Թորոս իշխանի ոսկի մատանի*, ANJ, Series I, Vol. IV 1980, էջ 101-103: ՃԵՄՃԵՄԵԱՆ, Հ. Ս., *Ոսկի մատանի Թորոս իշխանի*, ANJ, Series I, Vol. IV 1980, էջ 97-99:

պանուել է եւ շարունակում է համալրուել։ Անդրադառնալով Ս. Ղազարի դրամներին՝ այնտեղ գտնում ենք ինչպէս հայկական ծագում ունեցող, այնպէս էլ Հայաստանին վերաբերող դրամագիտական նիւթեր։ Հաւաքածուն դասակարգուած է ըստ բաժինների, բաժիններն էլ ունեն իրենց ենթաբաժինները։ Յաւօք, դրամագիտական հաւաքածոն այսօրուայ վիճակով արքայական առանձին հարստութիւնների գծով դեռեւս մնում է անորոշ։ Հաւաքածոն բաղկացած է հելլենիստական խմբի դրամներից, նշանակալից խումբ են կազմում հռոմէական ծագում ունեցող դրամները՝ թողարկուած ինչպէս հանրապետական շրջանում այնպէս էլ կայսրութեան ժամանակներում։ Ուշագրաւ են նաեւ կայսրութեան անկման շրջանին վերաբերող, այսպէս կոչուած ուշ հռոմէական կամ վաղ բիւզանդական դրամները։ Պարթեւական, սասանեան դրամների բաժինները զգալի մեծ են։ Հաւաքածոն ունի արաբական դրամներ, ունի նաեւ արեւմտաեւրոպական արդի մետաղադրամների մի զգալի մաս։ Ս. Ղազար թանգարանի հաւաքածոյում կան նաեւ եկեղեցական դրամների մի քանի նմոյշներ[7]*։ Մեծ թիւ են կազմում հայոց կիլիկեան դրամները, իսկ արտաշիսեան դրամների շարքում առաւելապէս Տիգրան Մեծի թողարկուած դրամները։ Հաւաքածոն ունի նաեւ Հայաստան անունով հռոմէական շրջանի գրեթէ բոլոր դրամների նմոյշները։ Հաւաքածուում կան նոյնպէս կեղծ դրամներ։ Գնահատելի է, որ թանգարանը ստացել է նուիրատուութիւններ տարբեր անձերից տարբեր ժամանակաշրջաններում։ Բարեխղճօրէն ու գնահատանքով նշուած են դրամների նուիրատուների անունները։ Յաճախ հանդիպող անուններից է Հ. Վահան Յովհաննէսեանի անունը։*

Այսպէս, մենք ներկայացրինք հաւաքածոյի ընդհանուր բնութագիրը՝ թէ ինչ բաժիններից է այն բաղկացած, որպէսզի կարողանանք գաղափար կազմել այս շատ կարեւոր հաւաքածոյի վերաբերեալ։ Անհրաժեշտ է ներկայացնել իւրաքանչիւր դրամների բաժինը՝ իր մանրակրկիտ ուսումնասիրութեամբ, որն ամփոփուած լինի վերջում՝ նիւթացուցակի տեսքով։ Ստորեւ այդ բաժիններից կը փորձենք հակիրճ ներկայացնել միայն մէկ բաժնի մէկ ենթաբաժինը՝ Տիգրան Մեծի դրամները։

Ինչպէս գիտենք, հայկական դրամագիտութիւնը բաղկացած է արտաշիսեան, կիլիկեան ու Հայաստանում շրջանառութիւն ու-

---

7 MACKENZIE, K. M., *Armenian Church Tokens*, ANJ, Vol. IV, 1978, 147-160.

նեցող օտար ծագման դրամների բաժիններից՝ հնագարեան շրջանից մինչեւ ուշ միջնադար։

Յայտնի է՝ մոլորակի խոշորագոյն թանգարաններում պահւում են հայկական դրամների մեծ ու փոքր ժողովածուներ։ Հայկական դրամներին վերաբերող ամենամեծ հաւաքածուները մեզ յայտնի երեք թանգարաններում են. Հայաստանի պատմութեան թանգարան (Երեւան), Մխիթարեան թանգարան (Վիեննա), որը կիլիկեան դրամների ամենամեծ հաւաքածուն է, եւ Ս. Ղազար թանգարան (Վենետիկ)՝ իր արտաշիսեան, բացառիկ որակեալ դրամներով։

Արտաշիսեան դրամների մասին առաջին անգամ՝ 1664 թուականին, յիշատակում է Է. Սպանհէմը[8]*։ Հեղինակը բազմաթիւ դրամների շարքում յիշատակում է Մեծն Տիգրանի (95-55 թթ. մ.թ.ա.) անունը, վկայակոչելով դրամի վրայի գրութիւնը* «ԱՐՔԱՅ ՏԻԳՐԱՆ»։ *Այդ օրուանից անցել են դարեր, այսօր բազմաթիւ գրականութիւն է հրատարակուել նուիրուած արտաշիսեան դրամներին՝ յօդուածների կամ մենագրութիւնների տեսքով։ Միեւնոյն ժամանակ, անցեալ դարերի համեմատ այսօր արտաշիսեան դրամների քանակը զգալիօրէն աւելացել է (հնագիտական պեղումների, նուիրատուութիւնների, պատահական գտածոների շնորհիւ)։*

Տիգրան Մեծի դրամները, ի տարբերութիւն արտաշիսեան միւս դրամների, կազմում են բացարձակ մեծամասնութիւն։ Այդ իսկ պատճառով ի զուր չէ, որ ասում են, որ հայկական դրամների կանոնաւոր թողարկումը սկսւում է Մեծն Տիգրանի ժամանակ։ Ոչ մի հայ արքայ այդքան առատօրէն եւ կանոնաւոր դրամներ չի թողարկել, ինչպէս Տիգրան Մեծն իր թագաւորութեան տարիներին։ Դեռ աւելին, այդ դրամները շարունակում էին մնալ շրջանառութեան մէջ նրանից յետոյ։ Տիգրան Մեծի դրամները, թէ՛ նրա կենդանութեան, թէ՛ նրանից յետոյ ունէին միջազգային դրամի դերակատարում, ինչպէս ժամանակին ունեցան Աղեքսանդր Մակեդոնացու դրամները՝ լիիրաւ ստանալով «համաշխարհային դրամ» *անունը։*

Ներկայացնելով Ս. Ղազարում Տիգրան Մեծի դրամների մեր հակիրճ բնութագիրը, նշենք, որ նրանց քանակը հասնում է

8 SPANHEM, E., *Dissertatio de Praestantia et usu numismatum antiquorum*, Rome 1664, 115, 132, 137.

յիսունի[9]*։ Հարկաւոր է նշել որ Տիգրան Մեծի դրամների թողարկումները բաւական բարդ դրամաթողարկումներ են։ Նախկինում հրատարակուած տեսակէտները չատերի համար ներկայումս ընդունելի չեն, երեւան են եկել նոր աշխատութիւններ ու յօդուածներ, որտեղ դրամաթողարկումների համար առաջ են քաշում նոր տեսակէտներ։ Արքայի դրամները թողարկուած են Անտիոքում, Դամասկոսում, իր մայրաքաղաքների դրամահատարաններում եւ արբանեակ դրամահատարաններում։ Դրամների պատուատիտղոսները բաժանւում էին երկու խմբի՝* «Արքայից արքայ Տիգրան» *եւ* «Արքայ Տիգրան»*։ Դրամները արծաթից, պղնձից են, առկայ են նաեւ երկու հատ կեղծ ոսկէ դրամներ (իսկ մենք գիտենք, որ Տիգրան Մեծի բոլոր ոսկէ դրամները կեղծ են)։ Դրժբախտաբար, հելլենիստական շրջանի հայ թագաւորների ոսկէ դրամներ մինչ օրս չեն յայտնաբերուել, այդ թւում եւ Տիգրան Մեծի։*

Հաւաքածոյի մեծամասնութիւնը կազմում են անտիոքեան չորեքդրամեանները (tetradrachma)*։ Իրենց պատկերատիպով անտիոքեան դրամները արքայի եղած դրամների միջից համարւում են ամենագեղեցիկները։ Անտիոքի դրամահատարանը իր աւանդոյթներով միշտ յայտնի է եղել. այն դարաւոր ճանապարհ է անցել, ուր դարերի ընթացքում հատուել են Սելեւկեան կայսրութեան, իրենց գեղագիտական կերտուածքով չափազանց գեղեցիկ ու ճանաչուած դրամներ, որոնք ոչ միայն հոգացել են կայսրութեան տնտեսութեան եւ դրամաշրջանառութեան խնդիրները, այլ հանդիսացել են վճարամիջոց բանակի համար։*

Անտիոքեան դրամների դարձերեսը իր պատկերագրութեամբ բազմազան է ու հարուստ, այն դրամագէտների համար

---

9 Երախտագիտութեամբ յիշում եմ բացառիկ մտաւորականի վառ նկարագիր ունեցող, ազնուափայլ, մեծ գիտնական եւ Մխիթար հօր կանթեղը վառ պահող Հ. վրդ. Պօղոս Անանեանին, որին ծանօթանալու բախտն ունեցայ ու վայլեցի նրա խստապահանջ յարգանքն ու բարեկամութիւնը: Նրա նկարագիրը շարունակ մնում է հոգուս մէջ ու երբեմ չի մոռացուի յիշարժան այդ օրը, երբ իմ առաջին ուղեկիցս ու առաջին անձը Ս. Ղազարի միջանցքներով առաջնորդեց Մեծն Աբրահոր սենեակը, որտեղ ապահովութեամբ ու փայփայանքով հանգրուան էին գտել վանքի դրամները: Հէնց Տիգրան Մեծի դրամների պահարանը ներկայացուեց առաջին այցելութեանս ժամանակ: Հաւատալով ու սպասելով մեր յաջորդ այցելութեան երկուստեմ վերատեսութեանը: Ցաւօք այդ հանդիպումը դարձաւ վերջինը երկուսիս համար:

եղել է ու շարունակում է մնալ ուսումնասիրութեան անսպառ նիւթ։ Հետեւաբար՝ ժողովածուում անտիոքեան բախտով 39 ատ-տիկեան արծաթէ չորեքդրամեանները կազմում են մեծամասնու-թիւնը։

Հաւաքածուն ունի նաեւ դամասկեան դրամներ. յայտնի է, որ նրանք մեծ քանակութիւն չեն կազմում։ Հաւաքածուն ունի Տիգրան Մեծի պղնձէ դրամներ՝ Վահագն (Հերակլէս) դիւցազնի պատկերով՝ կանգնած հասակով մէկ դէպի ձախ։ Դրամի կշիռը 4,6 գրամ է։ Գոյութիւն ունի նաեւ Տիգրան Մեծի՝ Դամասկո-սում թողարկած դրամ, որի կշիռը հասնում է 16,6 գրամի։ Այս դրամը համարւում է կեղծ։ Տիգրան Մեծը իր թագաւորութեան բոլոր դրամահատարաններում թողարկեց պղնձէ դրամներ, ո-րոնք աւելի շատ կիրառւում էին ներքին շրջանառութեան հա-մար։ Դրամների մէջ կան նաեւ վերաթողարկուածներ։

Զանդրադառնալով սոյն յօդուածի մէջ իւրաքանչիւր դրա-մի, հատ հատ որոշեցինք ժամանակակից պահանջներին համա-պատասխան Մխիթարեան միաբանութեան Տիգրան Մեծի դրամ-ների ամբողջական ցուցակը ներկայացնել նիւթացուցակի տես-քով՝ յուսալով, որ այն մօտ ապագայում կը հրատարակուի՝ ձօ-նուած 300-ամեակին։ Որտեղ կը գտնէք դրամների բոլոր հար-ցերին վերաբերող պատասխանները։ Այսինքն, կը գտնէք դրամ-ների դիմերեսի եւ դարձերեսի նկարագրութիւնը, պատուատիտ-ղոսների ու մենագրերի արձանագրութիւնները, դրամահատա-րանների անունները, չափ ու կշիռի տուեալներ, ինչպէս նաեւ նուիրատուների անունները։

Ցանկալի է ունենալ մնացած բաժինների հրատարակումը նոյնպէս, որը վստահ ենք ուշ թէ շուտ կ'իրականացուի։

Երախտիքի զգացում եմ տածում այն բացառիկ վերաբեր-մունքի համար, որ տարիներ առաջ ստացայ իմ այցի ժամանակ Ս. Ղազար։ Վայելեցի յարգանքը ու գնահատանքը միաբանու-թեան հայրերի, ովքեր թոյլատրեցին ու տրամադրեցին իրենց հարիւրաւոր տարիների ընթացքում հաւաքած նուիրական հա-ւաքածոյի հետ ծանօթանալ և ընթերցողիս ներկայացնել մեր ազգային հարստութիւններից մէկի՝ Տիգրան Մեծի դրամների ներկայութիւնը Մխիթարեան միաբանութեան ժողովածուում։

ԱՆԱՀԻՏ ՄՈՒՇԵՂԵԱՆ

Summary

MEKHITARIAN FATHERS OF VENICE AND NUMISMATICS

ANAHIT MOUCHEGHIAN

Mekhitarists were the first to study Armenian numismatics. They rescued and collected coins from different historical periods and built their collection. In the Armenian world, the St. Lazarus Monastery in Venice became the first major center of Armenian numismatic collection and preservation. The monks of the St. Lazarus, keenly aware of the importance of numismatics, employed numismatics as a resource to study and shed light on Armenian history questions.

The numismatic collection of St. Lazarus represents for its type and quality a major treasure of our national wealth. From the moment it was created until present times, the collection has been carefully preserved and enlarged. It contains Armenian coins as well as issues that pertain Armenian history. The collection is organized in sections and subsections. Unfortunately, the status of the collection in terms of dynastic categories remains uncertain. The collection is comprised of coins of the Hellenistic period and a large part of Roman origin ones, both from the republican and imperial periods. Coins of the late Roman period or early Byzantine one are also worthy of note. Parthian and Sassanian sections are also notably large. The collection includes Arabic coins as well as Western European ones from the modern period. In the St. Lazarus museum there are also samples of ecclesiastic coins. A large number are Armenian Cilician coins and those from the reign of Tigranes the Great in the Artaxiad period. The collection also includes almost every sample of the Roman period. There are also falsified coins. It is praiseworthy that the museum has received donations from different persons in different eras.